ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1965 Общественные науки

Լ. Վ. Մարգիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի առողջապահության բնագավառի աշխատողներն իրենց բոլոր ուժերը, գիտելիքները նվիրաբերեցին ռազմաճակատի և թիկունքի բուժսպասարկմանը։

Հայկական ՍՍՌ առողջապահության ժողկոմատը համապատասխան միջոցառումներ մշակեց թիկունքի սանիտարական վիճակը բարելավելու ուղղությամբ։ Լուրջ ուշադրություն դարձվեց սուր վարակիչ հիվանդությունները կանխելուն և համաճարակների դեմ մղվող պայքարին։ Ամենից առաջ օրինակելիորեն կազմակերպվեցին պրոֆիլակտիկ բնույթի միջոցառումները, ինչպես նաև նոր պատվաստանյութերի, սիճուկների և անտիբիոտիկ պատրաստուկների արտադրությունը։ Հիմնովին վերակառուցվեցին Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի, Ալավերդու և մյուս վայրերի պոլիկլինիկաները, որոնք դարձան թե՛ բուժական և թե՛ պրոֆիլակտիկ հիմնարկություններ։

Երկրորդ կարևոր միջոցառումը, որ առժողկոմատը իրագործեց պատերազմի տարիներին՝ մալարիայի դեմ մղված պայքարն էր։ Ելնելով ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1944 թ. մայիսի 29-ի՝ մալարիայի դեմ պայքարը ուժեղացնելու միջոցառումների մասին որոշումից, Հայաստանի բուժաշխատողները լայն գործունեություն ծավալեցին այդ հիվանդության դեմ պայքարելու ուղղությամբ։ Բարելավվեց մալարիայով տառապող հիվանդների հաշվառման գործը, ավելացվեց հակամալարիային բուժհիմնարկների թիվը և այլն։ Հակամալարիային բուժհիմնարկները 1944 թ. բնակչության շրջանում կատարեցին մասսայական հետազոտություններ, բժշկական քննության ենթարկեցին 150 հազար մարդու, 3500 հեկտար ճահիճներ ծածկվեցին նավթով, իսկ մոծակների թրթուրների ոչնչացման նպատակով կատարեցին սրսկումներ, ինչպես նաև կիրառեցին մի շարք այլ միջոցառումներ։

Պատերազմի տարիներին առանձնահատուկ ուշադրություն դարձվեց արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողների բժշկա-սանիտարական սպասարկման գործին։ Առժողկոմատը արտադրական խոշոր ձեռնարկություններում և կոլտնտեսություններում կազմակերպեց բուժ-սանիտարական կաբինետներ, զգալիորեն ընդարձակեց առողջապահական կետերի ցանցը՝ այն ապահովելով որակյալ բժշկական անձնակազմով։

Հանրապետության արտադրական ձեռնարկությունների բժշկա-սանիտարական կետերը ուսումնասիրում էին արտադրության պայմանները, ի հայտ բերում պրոֆեսիոնալ հիվանդություններ առաջացնող պատճառները և ձեռնարկությունների ղեկավարության հետ միջոցառումներ մշակում դրանք վերացնելու համար։ Բժշկուհիների անձնուրաց և բարեխիղճ աշխատանքը նոր թափ էր ստացել Հայրենական պատերազմի օրերին։ Բժշկական հարուստ գիտելիքներով ու փորձով զինված բժշկուհիներ՝ դոցենտ Աննա Ֆարմանյանը,

Լենինի շքանշանակիր Աշխեն Վարդազարյանը, Սաթենիկ Տեր-Դանիելյանը, Տիրուհի Խաչիկան, Արաքսյա Հարությունյանը, հանրապետության վաստակավոր բժշկուհի Մարգարիտա Կամենցկան, Հռիփսիկ Սարգսյանը, Սիրանուշ Առաքելյանը, Թագուհի Խուգոյանը բուժսպասարկումը հաջող կազմակերպելու, հիվանդների նկատմամբ մեծ հոգատարություն ցուցաբերելու համար արժանացան ժողովրդի ջերմ սիրուն և հարգանքին։

Ուշադրության արժանի է նաև միջին բուժանձնակազմի (բուժքույրերի) անձնվեր աշխատանքը։ Նրանք բարեխղճորեն կատարում էին բժշկի կողմից նշանակված բուժումը, ամեն անհրաժեշտ միջոց գործադրում ծանր հիվանդների վիճակը թեթևացնելու համար։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը պատերազմի պայմաններում մեծ հոգատարություն ցուցաբերեցին նաև երեխաների առողջության պահպանման, նրանց նյութական ու կենցաղային պայմանների լավացման գործի նկատմամբ։ 1942 թ. հոկտեմբերին ՍՍՌՄ ԺողկոմՍովետը հատուկ որոշում ընդունեց երեխաների բուժսպասարկման գործը բարելավելու մասին։ Իսկ 1944 թ. հուլիսի 8-ին հրապարակվեց հրամանագիր՝ հղի կանանց, բազմազավակ և միայնակ մայրերի նյութական օգնությունն ավելացնելու, բազմազավակություն խրախուսելու, մայրության և մանկության պահպանությունն ուժեղացնելու միջոցառումների մասին։

Պատերազմի տարիներին աճեց մանկամսուրների, մանկապարտեզների, մանկական հրապարակների թիվը։ Եթե 1940 թ. հանրապետության մանկամսուրներում ընդգրկված էին 16,942 երեխա, ապա 1943 թ. այդ թիվն ավելի քան կրկնապատկվեց[1]։

Պատերազմի տարիներին մանկաբույժներն է՛լ ավելի եռանդուն պայքար ծավալեցին երեխաների առողջապահության պահպանման համար։ Նրանք պայքարում էին երեխաներին սուր վարակիչ հիվանդություններից փրկելու և մահացության տոկոսն իջեցնելու համար։

1942 թ. հանրապետության առողջապահության ժողկոմատի կողմից 40 մանկաբույժ արժանացան շնորհակալության և խրախուսանքի։ Դրանց թվում էին լավագույն մասնագետ մանկաբույժներ՝ Ե. Աֆրիկյանը, Լ. Գրիգորյանը, Ս. Հովսեփյանը, Մ. Մարտիրոսյանը (Երևան), Ա. Եփրիկյանը, Գ. Միքայելյանը (Լենինական), Պ. Փափազյանը, Վ. Բաբայանը (Կիրովական), Վ. Աղաջանյանը (Սևան), Վ. Անդրիասյանը (Արտաշատ) և ուրիշներ։

Ռազմաճակատը և թիկունքը բժշկական կադրերով անընդմեջ ապահովելու գործում մեծ աշխատանք ծավալեց Երևանի բժշկական ինստիտուտը։ Գիտահետազոտական աշխատանքները վերակառուցելով պատերազմի պահանջներին համապատասխան, ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը իր ուսումնասիրությունների առարկան դարձրեց նաև պաշտպանական-բուժական հարցերը։ Ինստիտուտի ամբիոններին կից կազմակերպվեցին վիրահատման, զգպսավորման տեխնիկայի, արյան ներարկման, սուր վարակիչ հիվանդությունների բուժման և պրոֆիլակտիկ այլ ճյուղերի հատուկ դասըն-

1 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի պարտիական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի պարտիական արխիվ), ֆ. 1, գ. 45, էջ 31, 1943։

2 Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ), ֆ. 118, ց. 3, գ. 45, էջ 59։

թացներ։ Երկրի պաշտպանության շահերից ելնելով, իրենց աշխատանքները կգայի չափով վերակառուցեցին վիրահատման, ներքին ու ներվային հիվանդությունների և հոգեբուժական ամբիոնները։

Պատերազմի տարիներին ինստիտուտի աշխատանքները ղեկավարում էր կուսակցության անդամ, պրոֆեսոր, այժմ բժշկական գիտությունների դոկտոր՝ Վերգինե Միքայելյանը։ Ինստիտուտի աշխատանքները հմտորեն գլխավորելու հետ մեկտեղ, նա կարդում էր դասախոսություններ և զբաղվում գիտահետազոտական աշխատանքով։ Վ. Միքայելյանի գրչին են պատկանում շուրջ հիսուն անուն գիտական աշխատություններ և հոդվածներ։ Նրա ուսումնասիրության առարկան էպիդեմիոլոգիայի և բակտերիոլոգիայի պրակտիկ ու տեսական հարցերն էին, ինչպես նաև բուժման մի շարք նոր մեթոդների մշակումը։ Պատերազմի տարիներին ինստիտուտի ղեկավարման և կադրերի պատրաստման գործում մատուցած ծառայությունների համար Վ. Միքայելյանը պարգևատրվեց «Պատվո նշան» շքանշանով, Կովկասի պաշտպանության և Աշխատանքային արիության համար մեդալներով։

Հայրենական պատերազմի տարիներին մեծ աշխատանք կատարեց Կարմիր խաչի հանրապետական ընկերությունը, որը ռազմաճակատի, բժշկա-սանիտարական հիմնարկների, արտադրական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների համար պատրաստեց բժշկա-սանիտարական կադրեր՝ քույրեր, սանդրուժիններ, ախտահանողներ։ Ընկերությունը գործարար օգնություն ցույց տվեց էվակուացված բնակչությանը, կազմակերպեց անապատան երեխաների խնամքը, դասընթացների միջոցով կադրեր պատրաստեց անհրաժեշտ դեպքում բժշկական առաջին օգնություն ցույց տալու համար։ Դրա հետ միաժամանակ ընկերությունը սանիտարական, պրոֆիլակտիկ և հակահամաճարակային միջոցառումներ կիրառեց արտադրական ձեռնարկություններում և կոլտնտեսություններում։

Պատերազմը սկսվելուց հետո, միայն 7 ամսվա ընթացքում, ընկերության կողմից պատրաստվեցին 950 սանիտար, քույրական դասընթացներն ավարտեցին 946, իսկ սանդրուժիններ դարձան 2770 մարդ[3]։

Կարմիր խաչի ընկերության կազմակերպած քույրական դասընթացներն ավարտածների 17 տոկոսը մեկնեց գործող բանակ, 20 տոկոսը աշխատանքի անցավ եղբայրական հանրապետությունների հոսպիտալներում, մնացած մասը սպասարկում էր ռազմա-սանիտարական գնացքներին և սանիտարական կետերին[4]։

Կարմիր խաչի ընկերության կազմակերպությունների 5924 անդամներ հակահամաճարակային աշխատանքներ կատարելու նպատակով շրջագայել են բաղաքները, շրջկենտրոնները, գյուղերը, ստուգել ավելի քան 164 հազար բնակարան, հայտնաբերել վարակիչ հիվանդություններով տառապողներին և սանիտարական մշակման ենթարկել վարակի օջախները[5]։

Եթե առողջապահության ժողկոմատի ենթակայության ինստիտուտներում, գիտահետազոտական և բժշկական հիմնարկներում աշխատող մասնագետ կին

3 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1940—1941 թթ., գ. 313, էջ 87։

4 Վ. Մ. Ավագյան, Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ընկերության գործունեությունը Հայրենական պատերազմի տարիներին։ Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի, № 2, 1949, էջ 27։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 29։

կադրերի թիվը 1941 թ. հասնում էր 4704 մարդու, ապա 1943 թ. այն կազմեց 6362 մարդ, իսկ 1944 թ.՝ 7766 մարդ։ Հաղթանակի տարում Հանրապետության բոլոր բուժաշխատողների 58,1 տոկոսը կազմում էին կանայք[6]։

Հայաստանի հարյուրավոր բժշկուհիների, բուժքույրերի, սանիտարուհիների անձնվիրությունը ցայտուն կերպով դրսևորվեց հոսպիտալներում ապաքինվող վիրավոր մարտիկներին բուժելու ընթացքում։

Հայկական ՍՍՌ առողջապահության ժողկոմատը պատերազմի առաջին իսկ օրերից եռանդուն աշխատանք ծավալեց հոսպիտալների կազմակերպման ուղղությամբ։ Հայաստանի կառավարությունը և կուսակցության Կենտրոնական կոմիտեն այդ նպատակի համար ինչպես Երևանում, այնպես էլ Հանրապետության մյուս քաղաքներում, շրջանային կենտրոններում հոսպիտալների համար առանձնացրին հարմար շենքեր, դրանք կահավորեցին համապատասխան կահույքով։ Հանրապետությունում գործում էր 26 ստացիոնար հոսպիտալ և հինգ էվակոհոսպիտալ։

Հոսպիտալների կազմակերպման առաջին շրջանում վիրաբույժների և բուժքույրերի սուր կարիք զգացվեց։ Հոսպիտալներին այս հարցում օգնության հասան Երևանի բժշկական ինստիտուտը և բժշկական տեխնիկումները։

Ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը, վիրաբույժները, թերապեվտները, նևրոպաթոլոգները զգալի աշխատանք կատարեցին բուժկադրերի որակավորման ուղղությամբ։ Կարճատև դասընթացներ կազմակերպվեցին նաև բժշկական միջին անձնակազմի համար։ 1942—1943 թթ. ՀՍՍՌ առողջկոմատի կազմակերպած դասընթացներում որակավորվեցին 533 բժիշկ-բժշկուհի և 1546 բուժքույր[7]։

Պատերազմի տարիներին Հայաստանի բժշկական միջնակարգ դպրոցները դարձան ռազմաճակատի համար բուժկադրեր պատրաստող կարևոր հիմնարկներ և 1943—1945 թթ. ընթացքում տվեցին 1141 շրջանավարտ[8], որոնց 70 տոկոսը աղջիկներ ու կանայք էին։ Շրջանավարտների մեծամասնությունն աշխատանքի անցավ հոսպիտալներում, ուր բժշկական ավագ անձնակազմի 69 տոկոսը 1944 թ. նույնպես կանայք էին[9]։

Հիվանդների նկատմամբ բժիշկների ցուցաբերած հոգատար վերաբերմունքի շնորհիվ մեր հանրապետության հոսպիտալներում բուժվող վիրավորների 75,2 տոկոսը լիակատար ապաքինվելուց և բուժվող ռազմիկների 91,7 տոկոսը առողջանալուց հետո համալրեցին կարմիր բանակի շարքերը[10]։ Վիրավորների ապաքինման գործում մեծ դեր կատարեց արյան փոխներարկման հանրապետական կայանը, որն իր շուրջն էր համախմբել 5000 դոնոր։

Ծաղկաձորում տեղավորված հոսպիտալի ներքին հիվանդությունների բաժանմունքի աշխատանքները գլխավորում էր բազմավաստակ բժշկուհի Ալմա Ալեքսանդրի Քաթանյանը, որը վայելում էր մեծ հեղինակություն։ Սովետական կառավարությունը բարձր գնահատելով վերջինիս անբասիր և բարեխիղճ աշ-

6 ՀՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 229, էջ 2, գ. 243, էջ 1, գ. 240, էջ 106, գ. 260, էջ 6։

7 ՀՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 118, ց. 3, գ. 46, էջ 3։

8 Նույն տեղում, գ. 50, էջ 84։

9 Проф. Л. А. Оганесян. История медицины в Армении, т. V, Ереван, 1947, стр. 343.

10 Վ. Մ. Ավագյան, Հայկական ՍՍՌ էվակուա-հոսպիտալների գործունեությունը Հայրենական պատերազմի շրջանում։ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի աշխատություններ, № 1, էջ 40։

խատանքը, նրան պարգևատրեց Աշխատանքային արիության և Կովկասի պաշտպանության համար մեդալներով։ Ա. Ա. Քաթանյանը հետագայում իր կուտակած հարուստ փորձի հիման վրա գրեց գիտական աշխատություններ և ստացավ բժշկական գիտությունների դոկտորի աստիճան։ Նա հեղինակ է 30 գիտական աշխատությունների և հոդվածների, որոնք հրապարակվել են առանձին գրքերով, տպագրվել միութենական և արտասահման ամսագրերում։ Այժմ Աշխատանքային կարմիր գրոշի շքանշանակիր, պրոֆեսոր Քաթանյանը ղեկավարում է վերավորակավորման ինստիտուտի թերապիայի ամբիոնը։

Պատերազմի տարիներին աչքի ընկավ նաև ՀՍՍՌ վաստակավոր բժշկուհի, ակնաբույժ Ռայիսա Դովատուրը, որը վերականգնեց բազմաթիվ մարտիկների տեսողությունը։ Իրենց լավ աշխատանքի համար շնորհակալության և խրախուսանքի արժանացան 1571 հոսպիտալի երկրորդ բաժանմունքի պետ, փորձառու վիրաբույժ Սուսաննա Չիչյանը, բժշկուհիներ Իզաբելա Եղիազարյանը, Վարդուշ Գրիգորյանը, Յուլիա Առաքելյանը, ավագ բուժքույրեր Ա. Կուսագանովան, Ե. Մուրադյանը և Մ. Զաքարյանը։

Հանրապետության բժշկուհիների ու բուժքույրերի նվիրական աշխատանքը առաջին հերթին բարձր գնահատեցին վիրավոր մարտիկները։ Նրանք կամ նրանց հարազատները ռազմաճակատից և թիկունքից գրած իրենց նամակներում, հեռագրերում անհուն սիրով հիշում ու շնորհակալություն են հայտնում բժշկուհիներին, բուժքույրերին։ Գվարդիայի սերժանտ Նեդոստուպովը 1943 թ. օգոստոսի 13-ին Երևանի 1472 հոսպիտալի ղեկավարությանը, բուժող բժշկուհիներին ու բուժքույրերին ուղղած նամակում իր ջերմ շնորհակալությունն է հայտնում հոսպիտալի բուժաշխատողներին։ Նեդոստուպովը հոսպիտալ է ուղարկել նաև իր տասներեքամյա դստեր սրտառուչ նամակը, ուր ասված է. «Բարև, մեծարգո բժշկուհի Մարիա Չայալովնա, հղում եմ իմ բոցավառ պիոներական ողջույնը և ամուր սեղմում Ձեր ձեռքը։ Թույլ տվեք իմ պատանեկական ամբողջ սրտից շնորհակալություն հայտնել Ձեզ, Ձեր համառ ու տոկուն աշխատանքի համար, այն բանի համար, որ փրկեցիք իմ հայրիկի կյանքը և թույլ չտվիք, որ նա զրկվի ոտքից։ Դուք, իսկապես մահվան ճիրաններից փրկում եք մարդկանց, որոնք այնքան պետք են, այնքան թանկ են մեր հայրենիքի համար։ Ես ենթադրում եմ, որ Դուք փրկել եք ոչ միայն իմ հոր, այլ շատերի կյանքը, որոնք նույնպես զավակներ ունեն։ Որպես պիոներուհի, ես Ձեզ խնդրում եմ փրկել մեր հայրենիքն ազնվորեն պաշտպանող վիրավոր մարտիկների ու հրամանատարների կյանքն ու առողջությունը։ Ես շատ շնորհակալ եմ նաև բուժքույր Զինա Պրոխորովայից, իմ սիրելի հայրիկին ցույց տված հոգատարության և ուշադրության համար։ Ես Ձեզ չեմ ճանաչում, բայց պատկերացնում եմ, թե դուք մեր հայրենիքի ինչպիսի արի ու տոկուն հայրենասեր կանանցից եք»[11]։

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թ. հուլիսի 11-ի հրամանագրով՝ կառավարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու, գերմանական զավթիչների դեմ մղված մարտերում վիրավորված մարտիկների ու հրամանատարների բուժումը, հակահամաճարակային միջոցառումները, բնակչության մեջ տարվող բուժսպասարկումը հաջողությամբ կատարելու և բժշկական կադրեր պատրաստելու համար, 3239 բժիշկ և բուժաշխատող պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։ Նրանցից շուրջ

11 ՀՊՊԿ արխիվ տե՛ս № 1472 հոսպիտալի գործը, էջ 38։

500 հոգի մեր հանրապետության հոսպիտալների բուժաշխատողներ էին, այդ թվում նաև կանայք։

Հայկական ՍՍՌ հոսպիտալներում աշխատող բժշկական անձնակազմից 400 հոգի արժանացան Կովկասի պաշտպանության համար մեդալի։ 1944 թ. Սովետական Միության 14 հոսպիտալների շարքում Հայաստանի № 1460 հոսպիտալը նույնպես պարգևատրվեց ՍՍՌՄ Ժողկոմսովետի պատվոգրով։ Այսպիսով, Հայաստանի բժիշկներն ու բժշկուհիները, բուժքույրերը, սանիտարուհիները պատերազմի տարիներին պատվով կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հազարավոր բժշկական աշխատողներ համալրելով կարմիր բանակի շարքերը, ռազմաճակատում՝ հակառակորդի կրակի տակ, առաջին օգնություն էին ցույց տալիս վիրավոր ռազմիկներին։ Ռազմաճակատային հոսպիտալներում, սանկայաններում, հիվանդանոցներում ամեն ջանք գործադրում էին մարտիկներին ու հրամանատարներին բուժելու և ըստ հնարավորին նրանց մարտունակությունը շուտ վերականգնելու համար։

Պատերազմի հենց առաջին օրերին հարյուրավոր բժշկուհիներ, բուժքույրեր ներկայացան զինվորական կոմիսարիատները, հավաքակայանները և Կարմիր խաչի ընկերության կոմիտեները՝ ռազմաճակատ մեկնելու անկեղծ ցանկությամբ։

Հայաստանից կարմիր բանակի բժշկասանիտարական ծառայության մեջ ընդգրկված անձնակազմի զգալի մասը կանայք էին։ Դրանցից շատերը համալրեցին 390, 408, 406, 409, 76, 89-րդ հայկական հրաձգային դիվիզիաների լատորաբաժանումների բժշկա-սանիտարական մասերը։

Ռազմաճակատ մեկնած առաջին անվեհեր բուժքույրերից էր եղեգնաձորցի կոմերիտուհի Գոհար Նազարյանը, որը կիսատ թողելով իր ուսումը Երևանի բժշկական ինստիտուտում, կամավոր մեկնեց ռազմաճակատ։ 1941 թ. դեկտեմբերին նա գտնվում էր գործող բանակի առաջավոր գծում։ Գոհարը դաժան մարտերից մեկում կրակի տակ վիրակապում է 44 վիրավոր ռազմիկի, իսկ դադարից հետո, նրանց տեղափոխում մի կիսավեր խրճիթ։ Թշնամին նորից անցնում է հարձակման և շրջապատում այդ բնակավայրը։ Նազարյանը չի հուսահատվում, դիշերը վրա հասնելուն պես, իր օգնականներով վիրավոր մարտիկներին դուրս է բերում խրճիթից և անվնաս հասցնում բժշկա-սանիտարական կայան։

Գոհարը իսկական գթության քույր էր։ Նա իր ջերմ, հոգատար վերաբերմունքով թեթևացնում էր վիրավորների վիճակը։ Զորամասի հրամանատարությունը բարձր գնահատելով նրա ծառայությունները և հերոսական անձնազոհությունը, Գոհարին ներկայացնում է Լենինի շքանշանի, սակայն մինչև շքանշանի ստանալը, կատաղի մարտերից մեկում, թշնամու գնդակից զոհվում է կոմերիտուհի, խիզախ լեյտենանտ Գոհար Նազարյանը։

Անձնուրաց բուժքույր էր նաև Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի առաջավոր բանվորուհի, գվարդիայի ավագ Գոհար Հարությունյանը, որը Հայրենական մեծ պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը 15-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում մասնակցել է մեր հայրենիքի անկախության և ազատության համար մղվող մարտերին։ Հարությունյանը ակտիվ կերպով մասնակցել է Լուգանսկի, Ռոստովի, Ստալին-

ղրադի ազատագրման և Բեռլինի գրավման հերոսամարտերին և հայրենիք վերադարձել 11 շքանշաններով և մեդալներով պարգևատրված։

Դեռևս Ուկրաինայի համար մղված պաշտպանողական ծանր մարտերում իր ցուցաբերած խիզախության և արիության համար, 1941 թ. սեպտեմբերին, բուժքույր Գոհար Հարությունյանը արժանանում է մարտական ծառայությունների համար մեդալի։

Բժշկական ծառայության լեյտենանտ Օֆելիա Պետրոսյանի հրամանատարությամբ գործող սանիտարական դասակը հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում ակտիվորեն մասնակցել է Կովկասի հերոսական պաշտպանությանը։ Ժամանակավոր նահանջի դառնությունները կրելուց հետո նա քաջաբար մասնակցել է Մոզդոկի, Մինեռալնիե Վոդիի, Ստավրոպոլի, Արմավիրի, Կուբանի և ապա Ուկրաինայի ազատագրման մարտերին։ Նա աչքի է ընկել նաև Դնեպրի անցման ժամանակ։ Օֆելյան գյուղերից մեկի համար մղված դաժան մարտերի ժամանակ բժշկական օգնություն է ցույց տվել 22 վիրավոր մարտիկի և նրանց դուրս բերել կրակի գծից։ Դրա համար նա պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով։

Լենինգրադի հերոսական պաշտպանությանը մասնակցում էին ինչպես սովետական ամբողջ երկրի, այնպես էլ արևավառ Հայաստանի տասնյակ արիասիրտ կանայք և աղջիկներ։

ՀամԼԿԵՄ անդամներ Սոֆիա և Ռուզաննա Լալայանները, 1941 թ. բարձր գնահատականներով ավարտելով Լենինգրադի բժշկական ինստիտուտը, դիմեցին կոմերիտական կազմակերպությանը կամավոր մեկնելու ռազմաճակատ։ Նրանք, ստանալով բժշկական ծառայության ավագ լեյտենանտի կոչում, Լենինգրադը պաշտպանող հրաձգային գնդի սանիտարական գումարտակի կազմում, օր ու գիշեր, առանց հանգստանալու, կատարում էին բարդ վիրահատումներ, փրկելով վիրավոր շատ մարտիկների ու քաղաքացիների կյանքը։ Ռուզաննան տասն օրվա ընթացքում կատարել է ավելի քան հարյուր վիրահատում։ Մի այլ անգամ արյունաքամ եղած մարտիկներից մեկին՝ Նիկոլայ Բոնդարևին ներարկել է իր արյունից 150 գրամ և ապա կատարել վիրահատում։

Մարտական ծանր պայմաններում Լալայան քույրերը ընդունվում են կոմունիստական կուսակցության շարքերը։ Ռուզաննան պարգևատրվել է Կարմիր աստղի, իսկ Սոֆիան՝ Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով և Լենինգրադի պաշտպանության համար մեդալով։

156-րդ բժշկա-սանիտարական գումարտակի բժշկական վաշտի հրամանատար, երկրորդ կարգի զինվորական բժիշկ Բենենսոնը Սոֆիա Լալայանին բնութագրում է այսպես. «Երկրորդ կարգի զինվորական բժիշկ Սոֆիա Լևոնի Լալայանը ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ և ճշտապահ մարտիկ։ Տասն օրվա ընթացքում նա վիրահատել է 153 վիրավորի։ Նա մեծ հեղինակություն է վայելում գումարտակում»[12]։

1944 թ. փետրվարին Լագովոյի մոտ, վիրահատություն կատարելիս, ռմբակոծության ժամանակ հերոսաբար զոհվեց հայրենիքի քաջ դուստր Սոֆիա Լալայանը, իսկ նրա խիզախ քույրը մնաց իր մարտական պոստում մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտը։ Այժմ նա աշխատում է Երե-

12 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկական ծառայության լեյտենանտ Ս. Լալայանի անձնական գործը։

վանի տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի գիտահետազոտական ինստիտուտում։ Շնորհալի գիտական աշխատող, բժշկական գիտությունների թեկնածու Ռուզաննա Լալայանը 26 աշխատությունների և հոդվածների հեղինակ է։

1942 թ. հոկտեմբերին, երբ թշնամին խցկվել էր Կովկասի նախալեռները, բժշկական ծառայության մայոր Ռոզա Ջանջուտովան նշանակվեց № 4279 դաշտային ինֆեկցիոն հոսպիտալի պետ։ Պատերազմի ծանր օրերին հոսպիտալի կազմակերպման ու ղեկավարման գործում Ջանջուտովան հանդես է բերել կոմունիստին հատուկ կամք, կազմակերպական մեծ ունակություն։ Նրա ղեկավարած հոսպիտալը բժշկասանիտարական անձնակազմի անբասիր աշխատանքի շնորհիվ դառնում է օրինակելի։ «Զինվորական երկրորդ կարգի բժիշկ Ռ. Ս. Ջանջուտովան,— 1943 թ. մարտին գրել է 46-րդ բանակի սանիտարական բաժնի պետ, զինվորական առաջին կարգի բժիշկ Ջեպելևը,— աշխատելով որպես № 4279 սուր վարակիչ հիվանդությունների հոսպիտալի պետ, հոսպիտալի տեղափոխման և նրա աշխատանքների ծավալման ընթացքում ցուցաբերել է բացառիկ կորով, աչքի ընկնող կազմակերպչական ընդունակություն և ճկուն օպերատիվություն։ Նա արագորեն վերակառուցել է հոսպիտալը և հմտորեն կազմակերպել վիրավորների ընդունման և նրանց բուժման գործը։ Նրա համար չկար գիշեր ու ցերեկ, դադար չէր առնում մինչև որ վիրավորների համար առավելագույն պայմաններ չէր ստեղծում»[13]։

Հոսպիտալի աշխատանքներն օրինակելիորեն ղեկավարելու համար բժշկական ծառայության մայոր Ջանջուտովան պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով, իսկ մի շարք քաղաքների ազատագրման ու գրավման ժամանակ, մարտական պայմաններում, վիրավոր մարտիկների բուժման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար, 18 անգամ արժանացել է գլխավոր հրամանատարության շնորհակալագրին։

1941 թ. հունիսին, երբ մեր հայրենիքը ծանր օրեր էր ապրում, Լենինգրադից երկու ընկերուհիներ՝ Շուշիկ Ստեփանյանը և Զարիվարդ Դոլուխանյանը, գտնվում էին առափնյա պաշտպանների շարքերում։ Մարտական ծանր պայմաններում հայ ժողովրդի քաջարի դուստրերը, արհամարհելով մահը, առաջին օգնություն էին ցույց տալիս վիրավոր ռազմիկներին և սանիտարական կայաններ տեղափոխում նրանց։

Սևաստոպոլի տակ նրանց հրետանային դիվիզիան ընկավ շրջապատման մեջ։ Թշնամու օղակից նավաստիների ազատվելու և մեր զորամասերին միանալու միակ ելքը՝ դեպի ծով տանող ներքնախորշն էր, որը գտնվում էր հիտլերականների ուժեղ կրակի տակ։ Մուտքի մոտ գերմանացիները վառում էին բենզին, որպեսզի ծխախեղդ անեն այնտեղ թաքնվածներին։ Ծանր էր դրությունը ներքնախորշում պատսպարված նավաստիների համար. չկար ջուր, վիրակապ, սննդամթերք։ Վիրավոր մարտիկների թիվը մեծ էր, իսկ օգնությունը՝ պակաս։ Վիրավորված էր նաև Շուշիկը։ Չնայած դրան, նա մեկ վիրավորից մոտենում էր մյուսին՝ առաջին օգնություն ցույց տալիս, սպեղանի դնում նրանց վերքերին, զոհված մարտիկների գրպաններից հավաքում փամփուշտները և հասցնում կռվող մարտիկներին։

---

13 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկական ծառայությունների մայոր Ռ. Ջանջուտովայի անձնական գործը։

Տասն օր անց՝ նավաստիները որոշեցին մեկ-մեկ սողալով դուրս գալ ներքնախորշից։ Նրանց թվումն էր նաև Շուշիկը։ Այն պահին, երբ Շուշիկը ձորի միջով գնացող դուրս էր գալիս, գերմանացիները նկատեցին նրան և գերեցին։ Անմարդկային տանջանքի ենթարկելով Սևաստոպոլի, Սիմֆերոպոլի բանտերում և Շեպետովկայի մոտ գտնվող ճամբարում, նրանք Շուշիկին քշեցին Գերմանիա՝ հարկադիր աշխատանքի։

Մի այլ մարտում գերվել էր նաև Զարիվարդը։ Շուշիկ Ստեփանյանը և Զարիվարդ Դոլուխանյանը միմյանց հանդիպեցին Նոյրոպեն քաղաքի հիվանդանոցում, ուր աշխատում էին որպես հավաքարարուհիներ։

... 1945 թ. փետրվարին ռազմաճակատի հրամանատարության հատուկ առաջադրանքով Նոյրոպենի մոտ վայրէջք կատարեցին սովետական հետախույզներ Վաղարշակ Առաքելյանը և ռադիստուհի Անտոնինա Իվանովնան։ Նրանք կապվեցին Շուշիկի և Զարիվարդի հետ։ Շուտով ռադիստուհին տեղավորվեց նրանց նկուղում։ Այդ ժամանակից սկսած փոքրիկ նկուղից հայրենիք էր հաղորդվում կարևոր տեղեկություններ թշնամու զորքերի տեղաշարժերի, կուտակումների, ռազմական օբյեկտների և այլնի մասին։ Գերության մեջ գտնվող երկու հայ կանայք վտանգի ենթարկելով իրենց կյանքը՝ օգնում էին կարմիր բանակի վերջնական հաղթանակին։

Շուշիկը և Զարիվարդը, ընդգրկվելով հետախուզական աշխատանքի մեջ, նոր եռանդով են ծավալում իրենց ընդհատակյա պայքարը թշնամու դեմ։

Շուշիկն այժմ աշխատում է Երևանի 6-րդ պոլիկլինիկայում, իսկ Զարիվարդը ապրում և աշխատում է Գրոզնի քաղաքում։

Հայաստանի բժշկա-սանիտարական անձնակազմի կին կադրերն իրենց անբասիր ու անխոնջ աշխատանքով պատվով կատարեցին իրենց սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ։

Ռազմաճակատում գտնվող բժշկա-սանիտարական անձնակազմի հայ կանայք, մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պայքարում չխնայեցին իրենց ուժերը, գիտելիքները, շատերը նաև իրենց կյանքը։ Նրանք բարձր պահեցին սովետական բուժաշխատողների կոչումն ու պատիվը։

Л. В. Мартиросян

ЖЕНЩИНЫ АРМЕНИИ—МЕДИЦИНСКИЕ РАБОТНИКИ— В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Резюме

В статье освещаются вопросы обеспечения здравоохранения населения республики, а также деятельность медицинских учреждений и госпиталей по излечению раненых бойцов Советской Армии в годы Великой Отечественной войны. На основе архивных материалов автор показывает массовое участие армянских женщин—работников медицины—в

этом патриотическом деле. Автор приходит к выводу, что благодаря своевременному проведению ряда мероприятий партии и правительства и самоотверженной работе врачей, медсестер, санитаров и других медицинских работников было обеспечено нормальное состояние здоровья советских людей и раненых воинов, что имело важное значение в сохранении их трудоспособности и боеспособности в годы войны.